

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ԵՂԵՌՆԸ ՊԱՏՄԵԼՈՒ ԱՆՅԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ *

ՀՏԴ 82

DOI: 10.52063/25792652-2026.1.27-152

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
nellytadevosyan@gmail.com
ORCID: 0009-0002-0135-5703

Հոդվածում անդրադարձ է կատարվում Սփյուռքի ենթահողը
հանդիսացող Եղեռնի թեմային, մասնավորապես, թե ինչպիսի արձագանք
ունեցավ այն սփյուռքահայ գրականության մեջ:

Հոդվածի նպատակն է ցույց տալ, թե ստեղծագործական,
բարոյահոգեբանական ինչ խնդիրների առջև են կանգնում վերապրող
գրողները, հատկապես որբերի սերնդի ներկայացուցիչ ֆրանսահայ գրող
Վազգեն Շուշանյանը (1902-1941): Հայտնի է, որ Հայոց ցեղասպանությունը
վերապրած սփյուռքահայ գրողների մեծ մասին այդպես էլ չի հաջողվում
գեղարվեստորեն վավերագրել Աղետը. անգամ Եղեռնից տասնյակ տարիներ
անց նրանցից շատերը չեն կարողանում խախտել լռության պատնեշը:

Աշխատանքի խնդիրն է քննել Եղեռնի թեմայի գեղարվեստական
արտահայտման ձևերը Վազգեն Շուշանյանի ստեղծագործական
համակարգում, մասնավորապես՝ ինչ խնդիրների է բախվում գրողը Աղետը
գրականության միջոցով փոխանցելու ճանապարհին, ինչպես է դրսևորվում
Եղեռնի հոգետրավմատիկ ազդեցությունը շուշանյանական բնագրերում:
Կարողանո՞ւմ է արդյոք արձակագիրը հաղթահարել Եղեռնի տրավման, թե՞
մնում է լռության, ակնարկի, խզված պատումի գեղագիտական տիրույթում:

Ուսումնասիրությունն իրականացվել է կենսագրական, համեմատական,
վերլուծական և համադրական մեթոդներով:

Ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ Վ. Շուշանյանի մասին
առկա գրականագիտական աղբյուրներում քիչ է քննվել Եղեռնի գեղարվես-
տականացման խնդիրը: Հոդվածում հանգամանալիորեն ներկայացվում են Վ.
Շուշանյանի՝ Եղեռնի մասին խոսելու անկարողության խորքային պատճառ-
ները՝ ցույց տալով, որ լռությունը և կիսատ պատումը պայմանավորված են
ցեղասպանության թողած անջնջելի հոգետրավմաներով: Լռությունը Վ.
Շուշանյանի ստեղծագործություններում ներկայանում է ոչ թե որպես
գեղագիտական հնարք, այլ Եղեռնի ցավոտ փորձառությունից գիտակցված
փախուստ, վերապրումի յուրահատուկ ձև:

* Հոդվածը ներկայացվել է 15.02.2026թ., գրախոսվել՝ 19.03.2026թ., տպագրության ընդունվել՝
31.05.2026թ.:

Հիմնաբառեր՝ Եղեռն, սփյուռքահայ գրականություն, որբերի սերունդ, Վազգեն Շուշանյան, վերապրող գրող, հոգետրավմա, վերապրողի համախտանիշ, «մեծ լուռություն»:

Ներածություն

Նորություն չէ, որ սփյուռքահայ գրականության հատկանշական գծերից մեկն էլ Եղեռնը պատմելու անհնարինությունն է, ընդ որում՝ թեման դժվարամարս է ոչ միայն ավագ սերնդի գրողների, այլև հետեղեռնյան շրջանում ասպարեզ եկած որբերի սերնդի համար: Անուշտ, եղան արևմտահայ գրողներ, որոնք վավերագրեցին Եղեռնը իրենց ստեղծագործություններում, օրինակ՝ Ե. Օտյանը, որի «Անիծյալ տարիներ» ստեղծագործությունը ընդգրկում է 1914-1919 թթ. գրողի անձնական հիշողությունները, ավելի ուշ լույս են տեսել Ա. Աստուխյանի «Աքսորի ճամբուն վրայ» հուշագրությունը (1919-1920), «Այն սեւ օրերուն» (1919) պատմվածաշարը, ապա՝ «Մեծ ոճիրը» (1921) վավերագիրը, սակայն վերապրող գրողների մեծ մասին այդպես էլ չի հաջողվում գեղարվեստորեն վավերագրել աղետը. «դժոխային ահռելի տեսարանը» (Օտյան 194) այդպես էլ մնում է անպատմելի. «Վերապրող գրողներն ոչ ոք պիտի կրնայ գրել այն, ինչ որ հարկ է կոչել «Աղետին փորձառութիւնը» (Պլլտեան 1),- նշում է ֆրանսահայ քննադատ Գր. Պլլտյանը՝ բացառություն նկատելով միայն հուշագրող-վկայագրող Երվանդ Օտյանի պարագան:

Եղեռնի տրավմա և «Վերապրողի համախտանիշ»

Եղեռնը՝ իբրև հոգետրավմատիկ անջնջելի իրադարձություն, պատճառ է դառնում, որ վերապրողները դադարեն խոսել իրենց տեսածի, ապրումների, ցավի կամ հիշողությունների մասին: Ընդ որում՝ հնարավոր է, որ վերապրողը երբևէ չկարողանա խախտել լուռության պատնեշը: Հոգեբանության մեջ երևույթը հայտնի է իբրև «Վերապրողի համախտանիշ» ("Survivor syndrome"): «Վերապրողի համախտանիշ» ունեցող մարդիկ տառապում են նաև մեղքի և ամոթի զգացումներից: Հավելենք՝ տերմինը գիտական լայն կիրառություն է ստացել 1960-ական թթ. գերմանա-ամերիկյան հոգեբան, հոգեբույժ, հոգեվերլուծաբան Վիլյամ Նիդերլանդի (William G. Niederland) կողմից, որը զբաղվել է Հոլոքոստը վերապրածների հոգեբանական ու հոլզական խանգարումների ուսումնասիրությամբ, որոնք, ականատես լինելով իրենց ընտանիքի ու ժողովրդի զանգվածային բնաջնջմանը, ողջ են մնացել և մինչև կյանքի վերջը չեն կարողացել հաղթահարել ցեղասպանության տրավման (Niederland 413-425):

Խոսելով Եղեռնի հետևանքով ստացած տրավմաների մասին՝ հոգեբանության դոկտոր Կարին Փափագյան-Չոհրապյանը նշում է. «Հոգեխոցը (Traumatisme psychique) մարդուն հոգեկան աշխարհին վրայ անսպասելի, անկանխատեսելի ու բիրտ դեպքի մը հետեւանքն է: Հոգեխոցը հետեւանք է կոպիտ հանդիպումի մը մահուան հետ: ...Լռութիւնը, խօսելու եւ արտայայտուելու անկարողութիւնը կը յատկանշեն հոգեխոցը» (Փափագյան-Չոհրապյան 25):

Այս առումով հատկանշական է վերապրող բանաստեղծ Վ. Թեքեյանի՝ Եղեռնից ընդամենը մեկ տարի հետո գրված «Ահավոր բան մը այնտեղ...» բանաստեղծությունը, որտեղ գրողը փորձում է աշխարհին պատմել «մութին մեջ» տեղի ունեցող «ահաւոր բան մը»՝ սպանվող ազգի ողբերգությունը: Արդյունքում՝ «բովանդակ հրէշութեան» ականատես Թեքեյանը հասկանում է՝ բարդ, գրեթե անհնար է բառերով պատմել դժոխքը.

Ահաւոր բան մը այնտեղ կը կատարուի մութին մեջ...

Դժոխային այս տըռամն ի՞նչպէս կրնայ պատմուիլ... (Թեքեյան 56)

Նույն այս խնդրի առջև է կանգնում նաև Զ. Օշականը. գրողն այդպես էլ չի ավարտում «Մնացորդաց»-ը, որտեղ մտադրվել էր վավերագրել Աղետը. անգամ խորագիրն էր մտածել՝ «Դժոխք», սակայն հոգեկան տրավմաները, «երկարաձգված վիժտը» թույլ չեն տալիս, որ շարունակի:

«Հայ իրականության մեջ առաջիններից մեկը Կոստան Չարեանն է Աղետին չանդարդառնալու հրամայական առաջադրողը՝ այն նկատառումով, որ դա ճահճի պես կլափի վերապրողներին՝ թույլ չտալով առաջ քայլել պատմության մեջ» (Մոսինյան 76), - գրում է Դ. Մոսինյանը՝ վկայակոչելով Կ. Չարյանի «լուծություն» ու «փախուստ» արդարացնող տողերը. «Մեր կորուստը այնքան շատ է, որ գրել անկարելի է: Մոռանալու մեծ ցանկություն ունի՞նք: Երեկը արիւն է բոց, այսօրը անորոշ է եւ վաղը՝ անյայտ: Նրանք, որ վերադարձել են, լռում են: Լռում են, որպեսզի կարողանան ապրել» (Չարեան 74-75):

Այսպիսով՝ վերապրողը նախ փնտրում է ապրելու, կյանքը շարունակելու ուղիները. լռում է, որ ապրի, ասել է թե՛ բուժվի, կազդուրվի, բայց մյուս կողմից էլ լուծության, մոռացումի և խուսափման այս կերպը միայն արտաքին կեղևն է. իրեն շարունակում է կեղեքել սեփական աչքերով տեսած դժոխքը. «Մնացորդաց սերնդի Եղեռնից ազատված բոլոր գրողների, արվեստագետների համար «փրկվելը» ընգծված հարաբերական երևույթ է, քանի որ նրանց հետագա ստեղծածում Աղետից փրկագործվելու տիրապետող գերբնագիրը մշակութաբանորեն և ստեղծաբանորեն ցուցանում է Եղեռնից չազատագրվելը, չփրկվելը: Այսինքն՝ իրենց ստեղծածում Եղեռնը հղացական/բովանդակային պլանում ակնհայտ կամ քողարկված, միշտ առկա է», - իրավացիորեն նկատում է գրականագետ Գր. Հակոբյանը (Հակոբյան, 102):

Վերապրող գրողների առջև ծառանում է կարևոր հարցը՝ ինչպե՞ս վարվել. խոսել, լռել, թե՛ մոռանալ:

Որբերի սերունդը և Աղետի փորձառությունը

Պատահական չէ, որ մահվան հետ անմիջականորեն առերեսված ու արյունալի ճամփաներով անցած որբերի սերունդը ևս, չկարողանալով հաղթահարել Աղետի տրավման՝ հոգեխցը, լռեց, խուսափեց կամ միայն մասնակիորեն մոտեցավ ցավոտ նյութին:

Այս առումով հետաքրքրական է ԱՄՆ-ում հաստատված տրապիզոնցի գրող Լ. Չյուրմեյանի անկեղծ խոստովանությունը, որը Եղեռնից 30 տարի անց միայն՝ 1945-ին, պիտի ուժ գտներ գեղարվեստորեն վավերագրելու տեղի ունեցածը «Ձեզ եմ դիմում տիկիներ և պարոններ» ("I ask You Ladies and Gentlemen") ինքնակենսագրական վեպում (հայերեն թարգմանությամբ լույս է տեսել 1980-ին): Հեղինակային՝ «Մենք պիտի հիշենք նրանց» ներածական խոսքից պարզ է դառնում, որ անցյալի վերապրումը դեռ ցնցումներ է առաջ բերում գրողի հոգեաշխարհում. սեփական վերքերը շոշափելու, գրելու և ազատագրվելու ճանապարհը լի է դառնությամբ ու արցունքներով. «Մեռելները ոչինչ չեն պատմում, իսկ վերապրողները տակավին մոռնեց են: ...Վերապրողներս ցրվեցինք աշխարհի չորս ծագերը ու դեռ թաքցնում ենք մեր վերքերը: Մենք վարպետ ենք ինքնախաբեության մեջ: ...Տարագիր հայը լի է չասված խոհերով, ու նրա մեջ մեծ լուծություններ կան» (Չյուրմեյան 7-8):

Լ. Չյուրմեյանը խոստովանում է՝ իրեն հաջողվել է միայն «մասնակի, կցկտուր մի պատկեր տալ», քանզի անկարող է ամբողջությամբ վկայագրել տեղի ունեցածը. «Ամբողջ պատմությունը, կրկնում եմ, չի պատմվել ու չի էլ կարելի պատմել» (Չյուրմեյան 7):

«Մեծ լուծությունը» չկարողացան խախտել նաև 1920-ական թթ. Ֆրանսիայում հաստատված և ասպարեզ մտած որբերի սերունդը՝ Ծ. Շահնուրը, Ծ. Նարդունին, Զ. Որբունին, Փ. Միքայելյանը, Ն. Սարաֆյանը, Վ. Շուշանյանը, որոնց ստեղծագործություններում հիմնականում չկան սպանդի ու ջարդի արյունոտ

տեսարաններ: Այսինքն՝ Եղեռնից դուրս ճողոպրած սերունդը գիտակցաբար փորձում էր «ամեն կերպ զսպել, տկարացնել բառերը հանուն լռության, կամ էլ թե՛ բառերը շեղել Ադետի ուղուց, զբաղեցնել դրանք այլ իրողություններով ու երեւոյթներով՝ պատմելով հայրենական գյուղի, իսկ ապա՝ նաեւ արեւմտյան մեծ քաղաքների, ի վերջո՝ անկարելորդի մասին» (Մոսիկյան, 86): Մյուս կողմից՝ անապատի սերունդը որքան էլ փորձեր խուսափել տեղի ունեցածը անմիջականորեն վերարտադրելուց, այնուհանդերձ, լիակատար փախուստը անհնար է, քանզի, ինչպես նկատում է Գր. Պըլտյանը՝ երկրորդելով Զ. Օշականին. «Սպանդեն ետք կարելի չէ «արուեստի գործեր» գրել, ուր սպանողը ներկայ չըլլայ այսպես թէ այնպես» (Պըլտեան, Մարտ 458), ուստի, պատկերելով աքսորյալների տառապալից կյանքը օտար և մեծ քաղաքներում, հոգեկան, ֆիզիկական և մտավոր ուժերի վատնումը, օտարացումն ու այլասերումը, շարունակական քայքայումը, «Փարիզի տղաքը» անուղղակի կերպով պատմում էին նաև Ադետի մասին. «Գրելը այս իմաստով վկայել է կորուստեն, յիշել՝ ոչ այնքան այս կամ այն դեպքին մանրամասնությունը, որոնք ունին անշուշտ իրենց «վաւերագրական» արժեքը, այլ միշտ ջնջուող, միշտ ծածկումի ենթակայ արեան ու կրակին, ապանդին եւ ուժին «շիջումը»: Կորուստը միշտ ենթակայ է ծածկումի, նախ՝ կոտորածը կազմակերպողին կողմէ, յետոյ՝ կոտորուողին կողմէ, որ եթէ չ'ուզէր մեռնիլ, պէ՛տք է որ մոռնայ» (Պըլտեան, Մարտ 458-459):

Եղեռնի վավերագրումը. խոսելու անհնարինությունը

Վերապրողների համար արտահայտվելու, «մոռանալու» մյուս կերպը հետեղեռնյան անցյալի ու կորսված հայրենի եզերքի ոգեկոչումն էր: Համաստեղը, Վահե Հայկը, Վ. Շուշանյանը, Զ. Մնձուրին իդեալականացրին հայրենի եզերքը՝ երբևէ մանրամասնություններին չորսվելով, չպատմելով, թե ինչպե՛ս կամ ո՛ւմ ձեռքով հայրենի փողոցները հեղվեցին արյամբ. «Թե՛ Համաստեղի, թե՛ Շուշանյանի, թե՛ Մնձուրու և թե՛ մյուս հեղինակների երկերում Եղեռնը հետին պլանում է, «մտքում պահած», արդեն եղած կամ սպասվելիք իրողություն» (Թովչյան 198),- նշում է Ալ. Թովչյանը: Իսկապես, իր հայրենի գյուղաքաղաքը պատկերող «Ճերմակ Վարսենիկ» վեպում (Բեյրութ, 1960) Վ. Շուշանյանը նկարագրում է եվրոպական քաղաքակրթությանն ընդառաջ գնացող, նախաեղեռնյան գյուղաքաղաքը: Միայն 1929-1930 թթ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում, ապա 1951 թ. Բեյրութում առանձին գրքով լույս տեսած «Օրերը գեղեցիկ չեն» վեպում «գյուղական երանելի անդորրի մեջ աննկատելիորեն հասունանում է ապագա արյունահեղությունը» (Թովչյան, 198): Իդիլիայի մեջ ապրող գյուղաքաղաքի «գեղեցիկ օրերը», նախ, խռովվում են «տեղահանություն» բառից, ապա սկսվում է մղձավանջը՝ «հայոց թափառական ու տարահալած ժողովուրդը» «թափօրներով» գնում է դեպի մահ: Շուշանյանը դեպքերը նկարագրում է քնարական հերոսի՝ տասներկուամյա Սուրենի միջոցով, որը ճանապարհին կորցնում է մորը և հորը, տեսնում մեռելներ, «հոգեվարք մանուկներ» ու ճամփաների վրա ընկած աղջիկներ. «...Տեսաւ մարդիկ, որ պահէ պահ կը մեռնէին, ու զգաց, որ դժնդակ հրէշային բաներ կը սորվի: ... Ճամբու մը եզերքը մայրը ինկաւ ու զայն թաղեցին: ...Յետոյ գիշեր մը, հանգրուանի մը վրայ, մեռաւ նաև հայրը: Յաջորդ օրը ուրիշ մարդիկ թաղեցին նաեւ զայն ու Սուրեն՝ նորէն չարտասուեց: Աշնան մելամաղձօտ գիշեր էր, երբ ճամբայ ելան կրկին: Սուրեն կը քալէր լուռ, խորասուզուած իր երազին խորը» (Շուշանյան, Օրերը գեղեցիկ չեն 599-600):

Նկատենք՝ դեպի մահվան անապատ քայլող Սուրենի տեսարանով էլ գրողն ավարտում է վեպը՝ այդպես էլ թողին չհանձնելով «ապերջանիկ մարդոց պատմությունը», ինչպես որ անվանել էր վեպի երկրորդ մասը: Վեպի ենթախորագիրը մեզ հուշում է, որ գրողը մտադիր էր, իբրև ականատես, ներկայացնել, պատմել սեփական աչքերով տեսած դժոխքը, սակայն վիպական կառույցի անսպասելի

ընդհատումը ապացուցում է՝ Վ. Շուշանյանն ընկրկում է ծանր նյութի առջև. Աղետը կրկին մնում է անպատմելի:

Հավելենք, որ այս մոտեցումը նկատելի է թե՛ Վ. Շուշանյանի, թե՛ իր սերնդակից մյուս գրողների ստեղծագործություններում: Հետեղեմնյան սերունդը դժվարանում էր, խուսափում Աղետը անմիջականորեն, ականատես-վկայի տեսողությամբ պատկերելուց. «...Կարծես թե այդ անցեալը չափազանց ծանր էր տանելի ըլլալու համար կամ շատ դժուար ներկայացուելի: Որպես հեռաւոր անցեալ մը յղացուած կամ ապրուած, քողարկուած է ան ժամանակի նուրբ խաւով մը, զուրկ իսկական խտութենէ» (Պլուտեան, ֆրանսահայ գրականութիւն 414): Ուստի պատահական չէ, որ «Աղետը իր ամբողջ ուժգնութեամբ ապրողներէն» մեկը՝ Վազգեն Շուշանյանը, որը կորցրել էր իր ողջ ընտանիքը՝ հորը, մորը, քրոջը և եղբորը, չի կարողանում հաղթահարել հոգետրավման և, չնայած բազմաթիվ փորձերին, անընդհատ բախվում է եղեմը գրելու անհնարինությունը. տրավմատիկ փորձառությունը թույլ չի տալիս, որ ամբողջացնի գեղարվեստական պատումը: Նկատենք՝ իր ստեղծագործություններում, որոնք մեծ մասամբ ինքնակենսագրական բնույթ ունեն, արձակագիրը կիսվում է սեփական կյանքի դառն փորձով, կորուստների, աքսորի դաժան տարիների մասին դիտարկումներով, որոնցում պարզ է դառնում, որ տեղի է ունեցել սարսափելի, անդառնալի մի բան, որի պատճառով հայրենագրկվել է և թափառական է դարձել ժողովրդի մեկ հատվածը, որբացել է մի ամբողջ սերունդ, սակայն արձակագիրը շարունակում է լռել բուն Աղետի մասին. Անապատը՝ իբրև մահվան ու ոճիրի սահմանակետից վայր, իբրև անմարդկային փորձառություն, գրողի համար մնում է «անսանձելի», չգրվող իրականություն:

Այսպես՝ Նույն մոտեցումը տեսանելի է Նաև 1925 թ. «Հայրենիք» ամսագրում, ապա 1959 թ. Բեյրութում «Մահվան առագաստը» ստեղծագործության հետ առանձին գրքով լույս տեսած «Առաջին սերը» վիպակում. իրադարձությունները տեղի են ունենում Եղեմնից հետո, սակայն անգամ տասը տարի անց Վ. Շուշանյանը բավարարվում է միայն «անասելի դժբախտութեան տարիների» մասին հպանցիկ ակնարկներով: Այսպես՝ սիրած աղջկա հետ անմիջական ու մտերմիկ գրույցի ընթացքում քնարական հերոսը պատմում է իր «կեանքի տխուր պատմութիւնը»՝ մանկության երջանիկ օրերից մինչև անդառնալի կորուստները. «Պատմեցի քեզ մայրիկիս մասին, որ մեռած էր հեռաւոր ու տխուր անապատին մէջ, եւ քեզի ցոյց տուի գունատ ու ճմրթկուած թղթի կտոր մը, Նամակ մը՝ փոքրիկ եղբօրս գրովը, որ կտրած էր անապատի չար ու տխուր ծամբաները եւ հասած էր ինծի: Միատեղ կարդացինք այդ պարզ ու սրտաճմիկ երկտողը, որ կը խօսէր մահուան մասին ու սիրելի մօր մը, որ կտրած էր առյաւել Յունիսի մէկին» (Շուշանեան, Առաջին սերը 96): Հավելենք՝ հեղինակ-հերոսը ներկայացնում է մահացած մոր՝ Նարիկ Դանիելյանի նահատակման պատմությունը: Ընդ որում՝ ճշմարտացիորեն վերարտադրում է իր հետ կատարված՝ փոփոխելով միայն մոր մահվան օրը: Անանուն հերոսուհին ևս կիսվում է իր երջանիկ ու անհոգ անցյալի, հայրենի քաղաքի ու տան մասին պատմություններով: Պատմում է Նաև «կորսուած» մոր, քրոջ ու հոր մասին, սակայն պատմությունը անսպասելի ընդհատվում է. անկարող է պատմել «անպատմելին»:

Առավել խոսուն է որբանոցի աղջիկների երգեցողության դրվագը, որտեղ անուղղակիորեն պատմվում է անապատից եկած աղջիկների «հայրենական տան, կորսուած անցեալին ու անհետ կորած երջանկութեան» (Շուշանեան, Առաջին սերը 82) պատմությունը: Արձակագիրը մեջբերում է «հայ վշտի բանաստեղծի» (Նկատի ունի Ավետիս Ահարոնյանին - Ն.Թ.) «Զնիր, իմ բալիկ»-ը, որն «աւելի ահաւոր» հնչողություն է ստանում «այդ տնանկ ու անհայրենիք աղջիկներու բերնին մէջ» (Շուշանեան, Առաջին սերը 82): Հեղինակը փորձում է բացատրել իրավիճակի ողջ ողբերգականությունը. «Զանիներն էին, որ անապատէն կուգային կանխահաս ու դժբախտ մայրութեան մը կսկիծը սրտերուն մէջ» (Շուշանեան, Առաջին սերը 82): Ա. Ահարոնյանի բանաստեղծության միջտեսքատային «ներխուժմամբ» Վ. Շուշանյանը

կարևոր շեշտադրումներ է կատարում: Նկատենք՝ «Քնիր, իմ բալիկ» բանաստեղծությունը հայտնի է նաև «Նազեի օրորը» վերնագրով: Այն Ա. Ահարոնյանի «Արցունքի հովիտ» դրամայի չափածո հատվածն է, որտեղ Նազե անունով այրի կինը իր երեխայի համար երգում է այս օրորոցայինը: Համիդյան ջարդերից մազապուրծ Նազեն և անապատից եկած աղջիկները նույն ճակատագիրն են կիսում. տարբեր են ժամանակները, բայց նույնն է իրավիճակը:

Ծիշտ է, «Առաջին սերը» վիպակում Վ. Շուշանյանը նկարագրում է «դժբախտ ցեղի» տառապանքի, նվաստության, վերապրումի պատմությունը, սակայն չկա անգամ մեկ բառ, թե ինչու և ինչպես էին տղայի և աղջկա ընտանիքի անդամները հայտնվել անապատում, չկա որևէ նկարագրություն, թե ինչպես էին մահացել նրանք կամ ինչու և ինչպես էին որբացել երեխաները և այրիացել կանայք, ինչ «մուլթ ու դաւադիր ճամբաներ» են, որոնցով անցել են վերապրողները, հարցեր, որոնք մինչև վերջ անպատասխան են մնում:

Նույն՝ խոսելու, եղեռնը պատմելու անհնարինությունը տեսնում ենք նաև 1926 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում լույս տեսած «Մահվան առագաստը» (առանձին գրքով՝ 1959-ին) վիպակում: Քնարական հերոսը՝ պանդուխտ ու որբ Սուրեն Սարգիսյանը, Փարիզ է անցել մի քանի տարի առաջ: Նա հեղինակել է «Մահվան առագաստը» ստեղծագործությունը՝ «սիրոյ եւ ցաւի այս խոնարհ տողերը» նվիրելով փոքրիկ քրոջը՝ «մեռած լուռ եւ թշնամի անապատի մը մէջ, հեռու մեր հայրենի քաղաքէն ու մեր մօրենական երդիկէն, առանց սիրոյ եւ առանց գուրգուրանքի» (Շուշանեան, Մահուան առագաստը 30): Դժվար է «չճանաչել» հեղինակին, որն «անհարազատ ու օտար ճամբաներու վրայ» տարուբերվում է կյանքի և մահվան սահմանագծին, փորձում վերապրել: Ընդ որում՝ Վ. Շուշանյանը ոչ միայն կերպավորում է ինքն իրեն, այլև վերադարձվում քրոջ՝ Մարիի ողբերգական մահվան պատմությունը: Այս վիպակում ևս Վ. Շուշանյանը խուսափում է ջարդերի, իր որբության պատճառների, քրոջ մահվան հանգամանքների նկարագրություններից. ենթատողերում միայն որսում ենք քնարական հերոսի «ցաւի ու դժբախտութեան երկար ու դժնդակ օրերի» հեղինակային ակնարկները: Ծիշտ է, «տարագրության վաղորդայնին» գրված երկը հագեցած է մահվան տրամադրություններով, սակայն բացի Սուրենի հեղինակած «Մահվան առագաստը» ստեղծագործությունից և համանուն մահաքայլերգից՝ չկան ոչ վաղ անցյալում տեղի ունեցած Ադետի մասին հիշատակումներ: Տպավորություն է, որ ոչինչ չի եղել. մեծ քաղաքում հայտնված հայությունը շարունակում է իր գրամշակութային ընթացքը. գրվում են գրքեր (հիշենք Սարունու գիրքը՝ «Երատոյ, թագուհիի հայոց, քոյր եւ կին»), բեմադրվում են ներկայացումներ (Անրի Բաթայիի «Մերկ կինը», «Հիմար կույսը», Լ. Շանթի «Ինկած բերդի իշխանուհին»), հայ երիտասարդները վայելում են փարիզյան սեթևեթ մթնոլորտը: Փոխարենն արձակագիրը իրեն և ընթերցողներին «գրադեցնում» է մշակութային-ինտելեկտուալ հարցադրումներով. «Այդ դաժան ապրումներէն ձերբազատումի գործն է, թաքցնումի (camouflage) արուեստը: Խօսիլ ամէն, ամէն ինչի մասին, արեւմտեան մեծ քաղաքի բոլոր վայելքներու մասին, չպատմելու համար տարագրութիւնը» (Չոլաքեան 3),- նկատում է Փարիզի «Նոր Յառաջ» թերթի խմբագիր Ժիրայր Չոլաքյանը: Թվում է՝ կարևորի մասին լռելու որոշումը վերապրող հեղինակը երբեք չի խախտելու, սակայն իրականում փախուստ չկա. անընդհատ փորձ է կատարելու խախտել «մեծ» լռությունը:

Այս առումով հետաքրքրական է 1927-1928 թթ. գրված և միայն 1966 թ. երևանում լույս տեսած «Երկիր հիշատակաց» պոեմը, որտեղ քսանհինգամյա Վ. Շուշանյանը կրկին փորձում է հաղթահարել իր՝ «խոսելու անկարողությունը» արդեն չափածո շարադրանքի միջոցով: Գրողն իրեն անվանում է «սև շուշան», որն իր ուսերի վրա ունի «չորս մեռել» և «երկիր մը հիշատակաց», եւ որը վիրավոր թռչունի պես փորձում է ապրել «խառնակ» ու «գեշ» քաղաքում: Պոեմը բաղկացած է երեք մասերից՝ «պաստառներից»՝ «Մանկություն անցելատույզ», «Մահվան ճամփաներ»,

«Վերադարձ»: Երկրորդ պատժառու, որի վերնագիրը բավական խոսուն է, Շուշանյանը փորձում է պատմել սեփական աչքերով տեսած մահվան ու անապատի «երկար» ու «անջրդի» ճամփաների մասին, ներկայացնում դեպի անապատ գնացող քարավանը, մահվան ճամփաները, որոնք ծածկված էին ծերերի, երիտասարդների ու մանուկների մարմիններով: Գրողը չի խուսափում և պատմում է նաև պաշտելի ընտանիքի՝ հոր, մոր, եղբոր ու քրոջ մահվան հանգամանքները: Թվում է՝ պատմեց, ասաց ամեն ինչ, սակայն այդպես էլ նատուրալիստական մանրամասնությունների չի հասնում. կրկին չկան ոճրագործը՝ «խուժանը», ու բուն գործողությունը, պատկերները կցկտուր են, «լրդված», ինչի մասին անկեղծորեն խոստովանում է. «գունատ» և «տաք» բառերով, «մաքուր» ձայնը գցած անկաշկանդ երգել է իր հայրենի եզերքը, պատմել երագների, անհագուրդ ծարավների, մենության ու սիրո մասին, սակայն մահվան ճամփաների և անապատի մասին խոսելիս:

Բառերը կմսին բերնիս վրա, կիյնամ ցավով գետին,

Փռած պտուղի պես: Երգս կողոպ

Մորը որովայնեն հագիվ ծնած մանկան մահվան դողով... (Շուշանյան, Երկիր հիշատակաց 378):

Պոեմում Շուշանյանը բարձրաձայնում է նաև ամոթի մասին, ինչը բնորոշ է «վերապրողի համախտանիշով» տառապող մարդկանց, որոնց թվում է նաև արձակագիրը: Գրողին տանջում են ամոթի զգացումը, ինչպես նաև ապրելու «մեղքը»: Ֆիզիկական ու հոգեբանական նվաստացումների միջով անցած գրողը խոր ամոթ է զգում, քանզի ինքը ևս «ուրիշներուն նման» եղավ «վատ», «թույլ, հեղգ ու դավաճան», անկարող՝ «մեր քույրերուն գլուխները ջախջախող ձեռքերը խածնել» (Շուշանյան, Երկիր հիշատակաց 380): «Վատության և իզուության սև կաթով» կերակրված խեղճերի ու վախկոտների այդ բազմությունը այդպես էլ չունեցավ «քաջության բարձրանալու ճիգը», և լուռ ու հնազանդ ընդառաջ գնաց մահին՝ «օտար հողը» «թրջելով» սեփական արյամբ:

Մեռանք ծեր ու չուռած ձիերու պես, որ իրենց ճակտին

Ապերախտ տիրոջ մահվան մուրճը կընդունին... (Շուշանյան, Երկիր հիշատակաց 380):

Չոհ լինելու ամոթը «անջնջելի խարանի» պես հետապնդում է Աղետը վերապրածներին: Հետագայում լռելու նախապայմաններից մեկը դառնում է նաև ամոթի գործոնը, ինչի մասին Շուշանյանը խոստովանում է «Ալեկոծ տարիներ» ստեղծագործության մեջ. «Մահը լոկ կրնայ գերագոյն ներում մը պարգևել մեզմէ շատերուն: Լոկ լռութիւնը կրնայ մեղմել մեր երեցներուն հպարտութեամբ ու արժանաւորութեամբ մահը դիմաւորել կրցած չըլլալու անշիջելի ցաւը» (Շուշանյան, Ալեկոծ տարիներ 54):

Տարագրության ու վերադարձի թեմային Շուշանյանն առավել հանգամանալից անդրադարձնում է վերոնշյալ, ապա՝ 1940 թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում լույս տեսած «Մթին պատանություն» վիպակում (առանձին գրքով՝ Բեյրութ, 1956): Ընդ որում՝ գրողը փորձարկում է խոսելու տարբեր կերպերը. եթե «Ալեկոծ տարիներում» առաջին դեմքով է պատմում ցավոտ եղելությունը, ապա «Մթին պատանությունում» ընտրում է գեղարվեստականացման ճանապարհը:

Այսպես, «Մթին պատանություն» վիպակի գործողությունները պտտվում են հեղինակ-հերոսի՝ Բաբգենի շուրջ, որը, Աղետը վերապրած, «չորս մեռել ուներուն վրայ», որբության ու կյանքի դառնությունները ցմրուր ճաշակած, վերադառնում է հարազատների մոտ: Շուշանյանը վիպակում շոշափում է վերապրողի հարաբերությունը աշխարհի և միջավայրի հետ, փոխանցում վերապրողների սպասումները և դրանցից բխող հոգեբանական ծանր ապրումները, Եղեռնի հետևանքով ստացած տրավմաները: Նախ՝ վերապրողը բախվում է անշրջելի իրականությանը. եթե աքսորի տարիներին մերժել էր ցավոտ իրականությունը, ապա այստեղ խուսափումն անհնար էր: Մեռելների պարտադրող «ներկայության» ու

«արթնցող» ցավերի հետ խորանում է Բաբգենի հոգեկան խզումը միջավայրից, ինչն ավելի ու ավելի է խորացնում լուրջության պատմեջը: Հասկանում է՝ ինքն «անդառնալիքով» որք է այլևս, մենակ, իսկ ազգականները միայն օտարներ են՝ անկարող չափելու իր ցավի մեծությունը, վերադարձնելու իրեն իր կորցրածը, հասկանալու իրեն. «Օտարի տան մեջ էր արդարեւ, տան կլիման օտար էր իրեն ու մարդ ստիպուած էր օտարութեամբ վարուիլ այս օտարներուն հետ: Ամէն հայրենի տուն որոշ անձնաւորութիւն կ'ենթադրէ: Մինչդէռ ինք կ'ապրէր կծկուած ինքն իր վրայ, բանտարկուած ինքն իր մէջ» (Շուշանեան, Մթին պատանութիւն 36-37)

Ցավոտ իրականությունը և կորստի մեծությունը զայրույթ են առաջացնում Բաբկենի հոգեաշխարհում, ինչի հետևանքով ավելի է սրվում օտարության զգացումը. «Օտարութեան այս զգացումին ետին պահուած է աղետի փորձառութիւնը եւ Շուշանեանի կերպարը կը խուսափի այդ մասին խօսելէ այստեղ» (Պըլտեան, Ֆրանսահայ գրականութիւն 420):

Իսկապէս, անցյալի ու կորուստների մասին շարունակ խոսում են շուրջինները, իսկ Բաբգենը այդպէս էլ դուրս չի գալիս «լուրթեան եւ մնջութեան գօտիից»՝ մինչև վերջ անհասանելի թողնելով ծնողների մահվան մանրամասները, չպատմելով սեփական աչքերով տեսած դժոխքը: Ցավոտ տեսարանների փոխարեն արձակագիրը հյուսում է «քաղցր» մանկության իդիլիան՝ վերակենդանացնելով հայրենի տունը, ծնողներին, հատկապէս անհազ կարոտով կերտում մոր լուսավոր կերպարը: Կորուստների, հոգեկան ծանրագույն ապրումների մասին պատմությունները մանրամասնությունների չեն հանգում, անգամ «չի հիշատակվում հանցագործի անունը, որ իր ամբողջ սերնդի համար ընտանիք դարձրեց որբանոցները» (Սևան 47), - իրավացիորեն նկատում է գրականագետ, գրող Գ. Սևանը: Ավելին՝ խոսելով անապատից վերադարձած Արուսյակի մասին՝ հեղինակը քննության նյութ չի դարձնում աղջկա «ամօթահար մայրութիւնը»: Նկատենք, սակայն, որ լուրջան, չասված մանրամասնությունների հետևում թաքնված է սարսափելի իրականությունը՝ անապատից վերադարձած Արուսյակը հղիացել էր աքսորի ճամփաներին:

Մյուս կարևոր կետը իրականության հետ կապի խզումն է՝ ժամանակի «սխալ» ընկալումը, ինչը հատուկ է հոգեկան ուժեղ ցնցում ապրածներին: «Մթին պատանություն» վիպակի հեղինակ-հերոսի համար կա ժամանակային երկու գոտի՝ հեռավոր անցյալ և ներկա. դրանց միջև ընկած շրջանը «անտեսված» է. մոտ անցյալի դեպքերը մինչև վերջ մնում են անպատմելի. «Այս լուրթիւնը աւելի եւս նշանակալից է, քանի որ կերպարը, բնականաբար, առաջուան կեանքին երջանկութեան պահերը կ'ոգեկոչէ: Հեռաւոր անցեալին եւ ներկային միջեւ աննկատելի գիծ մը կայ որ գրաքննուած է կամ անհասանելի կը մնայ: ...Ան յստակօրէն կը նշանակէ, թէ հոգեխոցիչ անցեալին մասին կազմակերպուած պատումի մը բացակայութիւնը բացայայտ մերժումի մը հետեւանք է» (Պըլտեան, Ֆրանսահայ գրականութիւն 422), - ընդգծում է Գր. Պըլտյանը:

Վ. Շուշանյանն ավելի բաց և անկեղծ երկխոսության մեջ է մտնում «Ալեկոծ տարիներ» ստեղծագործության մեջ, որտեղ հանգամանալիորեն շոշափում է Եղեռնի, տարագրության, «անփառունակ» վերադարձի խնդիրները (Այս առումով հատկանշական է գրքի երկրորդ՝ «Վերադարձի նշմարներ» խորագրով գլուխը), ինչպէս նաև քննում խոսելու և գրելու, նյութի ծանրությունը հաղթահարելու իր և իր սերնդի անկարողությունը:

Ճիշտ է, այս գրքում ևս զանց է առնում պատմելու աքսորի «անիծեալ» տարիները, քանի որ «մոխիրը դեռ տաք է, ու մարդ կրնայ ձեռքերը այրել խառնելով զայն», սակայն ներկայացնում է «չորս երկար ու դաժան տարիներ» «Արեւելքի ճամբաներուն վրայ» ոտքերը մաշեցրած տղայի վերադարձի ողբերգությունը. «Հայր, մայր, քոյր ու եղբայր յաւետ կորսուած էին, կը վերադառնայի միւսակ, անոք» (Շուշանեան, Ալեկոծ տարիներ 45): Արդեն Գոնիայում՝ մորաքրոջ տանը, ուր իրեն զլանում են անգամ մնալու «կես-բերան» առաջարկ անել, հասկանում է, որ Աղետը

հիմնիվեր շրջել է իր կյանքը. ինքն այլևս հարազատներից օտարված մեկն է և «մենակ ու անզեն» «պարտաւոր է մագիլներով իր ճամբան բանալ»։ Ընդ որում՝ հարցը չի վերաբերում միայն իրեն. Շուշանյանը շոշափում է նաև իր նման հազարավորների առջև ծառացած գոյաբանական խնդիրները։

Անդրադառնալով Եղեռնը պատմելու անհնարինությանը՝ Շուշանյանը միաժամանակ հակադարձում է վերապրողներին ուղղված անհիմն մեղադրանքներին. «Այս վերջին տասնամեակին բազմաթիւ գրիչներ, որ կը պատկանին պայմանադրական տափակ կամ աղետէն հեռու ապրած մարդոց՝ անընդհատ սեւով ճերմակի վրայ, խոշոր անմտութիւն մը գրի առին։ Ինչո՞ւ համար, կ'ըսէին այդ անկարողները, Նոր գրողները չէն պատմեր մեր ժողովրդին եզակի ողբերգութիւնը։ Խորունկ ու անծայրածիր է այդ տառապանքը, կ'ըսէին ու ոչ մէկ նիւթ աւելի այժմեական է ու կերպով մը բարոյական անխուսափելի պարտք կը դնէին երիտասարդներուն վրայ, որ արիւնով գրի առնեն այդ անօրինակ գահանդանքը» (Շուշանեան, Ալեկոծ տարիներ 49)։

Եւ ինչ, որ պատահական չէ Շուշանյանի այս պատասխան-հակադարձումը. վերապրողների՝ Եղեռնի անմիջական ոգեկոչումից խուսափումն ու լռությունը, քննադատության ու անհիմն մեղադրանքների թիրախ են դարձնում նրանց։ Սուր քննադատողներից մեկն, օրինակ, Չապել Եսայանն է, որը, հիշեցնենք, առաջիններից էր, որ գեղարվեստորեն վավերագրեց 1909-ին տեղի ունեցած կիլիկյան կոտորածները՝ լույս ընծայելով «Ավերակներուն մեջ» ստեղծագործությունը (1911)։ Եղեռնից տասներկու տարի անց գրված իր հոդվածում Եսայանը վերապրողների այս մոտեցումը անարդարացիորեն համարում է գրողական «տկարություն»։ «Անցեր եր մեծ պատերազմը, մասնավորապես սոսկալի հետեվանքներով հայ մասսաներու համար։ Յերուպայի և Ամերիկայի գաղութները ստվարացնող յեկվորները մեծ մասամբ աքսորե, տարագրութենե վերապրողներ եյին։ Իրենց մեջ կային բազմաթիւ գրողներ։ Պիտի կարծվեր, վոր այդքան խտացյալ, այդքան յեղերական կեանք մը ապրող, այդքան տաժանելի հոգեվարք մը քաջքող ժողովուրդը պիտի ունենար իր հավաքական և անհատական տագնապալի շրջանին արտահայտությունը գրականության մեջ։ ...Անկարելի յեր յերևակայել, թե ժողովուրդ մը, վոր միշտ պարծեցած է իր գրական և մտավորական կյանքով, այդպիսի դեպքերով լիքը շրջանե մը յետքը, անկարող պիտի ըլլար տալու մեկ քանի յերկեր, ուր գեղարվեստորեն արտահայտած ըլլային իր ապրումները։ Այլ, սակայն, իրական է, վոր արևմտահայ մտավորականությունը անգոր մնաց կացության առաջ և անիկա չտվաւ վոչ մեկ գործ, որ արժանի ըլլա դասել գեղարվեստական գրականության մեջ» (Եսայան 220)։

Բոլոր մեղադրող «գրիչներին» ուղղված իր պատասխանում Շուշանյանը բացատրում է իր և իր սերնդի լռության պատճառները՝ շեշտելով, որ դրանք պայմանավորված են ոչ թե գրողական տաղանդի պակասի կամ միջավայրի փոփոխությամբ, այլ ավելի շատ ներքին հանգամանքներով. դեռ չեն կազդուրվել Եղեռնի հոգետրավմատիկ ազդեցությունից, դեռ չեն թոթափել անցյալի ծանր հիշատակների բեռը։ Գրողը վերահաստատում է Կ. Չարյանի առաջադրած «լռում են, որ ապրեն» բանաձևը. ապաքինվելու համար վերապրողները վազում են դեպի կյանքը՝ փորձելով նորովի ապրել, զգալ կյանքի բերկրանքը՝ ամեն կերպ փորձելով մոռանալ «գեհենային տարիները»։ «Խաւարէն դուրս ճողոպրողը սակայն նախ կ'երգէ լոյսին քաղցր ջերմութիւնը։ ...Պատերազմի անափ գիշերէն տաժանքով դուրս եկողները, վիրաւորեալ ու սրտաբեկ, նախ ստիպուած էին վերագտնել կեանքի հրճուանքն ու անդորրութիւնը» (Շուշանեան, Ալեկոծ տարիներ 49)։

Վերլուծելով սեփական ապրումները՝ Վ. Շուշանյանը խոստովանում է՝ «խորաչափելով» «անցելոյն անդունդը», ավելի ու ավելի ուժգնությամբ և «տաժանելի յաճախանքով է» ապրում ողբերգությունը՝ անկարող հաղթահարելու տրավմատիկ հիշողությունը, անկարող պատմելու տեղի ունեցած «ահավոր բան մը», քանզի. «Անբուժելի ու խորունկ վերքերը կը նախընտրեն լռութիւնը, որ մեծվայելուչ ու լուրջ է։

Մեծ վշտերը լեզու չունին: Նոյսիսկ ոսկեբարբառ բանը երբեմն սրբապղծութիւն կը թուի: Այս վերջին տարիներուն՝ հոգեկան խուլ տառապանքներէ, ներքին փոթորիկներէ ու յուսաբեկութեան նոպաներէ վերջ, շրթներուս վրայ նախադասութեան մը մոխիրը մնաց» (Շուշանեան, Ալեկոծ տարիներ 50-51):

Խոսել, պատմել Եղեռնը՝ նշանակում է վերստին փորժել «կոտտացող» ու արյունահոսող, չսպիացող վերքերը, վերստին այրվել: Իր սերնդի գրական տաղանդին անվերապահորէն հավատացող Վ. Շուշանյանը ստիպված է խոստովանել՝ Եղեռնի դառն փորձառությունը վավերագրելը վեր է իրենց՝ «ճղակոտոր» սերնդի ուժերից. «Հարկ չէ մոռնալ նաեւ, որ հսկաներու սերունդ մը չէ մերինը ու ժամանակին դիմաց անցեալը սեւեռելու այդ դաժան բեռը խիստ ծանր է մեր ուսերուն վրայ: ...Գուցէ ժամանակի ընթացքին յաջողի՞նք գէթ մասնակի վկայութիւններ բերել ու ասիկա կ'ըլլայ մեր լաւագոյն տուրքը» (Շուշանեան, Ալեկոծ տարիներ 50):

Նկատենք՝ Շուշանյանը շեշտում է՝ լուրջութիւնն իրենց համար դեպի կյանք վերադառնալու, վերապրելու գոյաբանական պահանջ է, որպէսզի երիտասարդ վերապրող-գրողները կարողանան գրի առնել անմիջականորէն իրենց ինքնակենսագրությանն առնչվող «գահանդանքը», այն է՝ որբությունն, աքսորն ու անապատը, ժողովրդի կորստի ու շիջման սահմանեցուցիչ պատմությունը, անհրաժեշտ է ժամանակ ու հեռավորություն:

Արձակագիրը նկատում է՝ կա նաև «աւելի խորին» և համոզիչ պատճառ, որը «յարաբերական լուրջութեան» է «դատապարտել» սերունդին՝ ինչպէս, ինչ լեզվով պատմել հոգիներում ծվարած «խորունկ ու անբուժելի ցաւը», ինչ եղանակով պատմել «ահարկու ու ասնձաբեկ փոթորիկը», ինչպէս ողբալ մահը՝ գոռա՛, թե՛ լռել: Այսինքն՝ լեզվական մակարդակում ևս անկարող էին ամրագրել իրենց ապրած փորձառությունը:

Այսպիսով՝ «հիշողությունների ավերակույտը», «խորունկ ու անբուժելի ցաւերը» անգամ տարիներ անց շարունակում են կեղեքել վերապրող-գրողներին՝ թույլ չտալով գրի առնել անմարդկային ողբերգությունը: Մինչդէռ հենց իրենք՝ «ամենաստույգ» վկաները, պիտի պատմեն «ազգասպանության և ազգահորինման այս գեհնը». «Սա ի՞նչ է, զոհի հետ նաև ճիչի՞ խժռում» (Մնձուրի 534),- վերապրողների՝ Եղեռնը պատմելու անհնարինությունը այսպէս է ձևակերպում Հրանտ Մաթևոսյանը՝ հավելելով, որ անգամ տարիներ անց Եղեռնը շարունակում է կեղեքել հայ գրողներին. «Եղեռնը դժոխք է, բազմագլուխ հրեշ, որ չի թողնում մոտենալ, թունավոր բոցերով դեռ հեռվից է խելագարեցնում ու ոչնչացնում ամեն մի հայ մարդու, առավել ևս՝ արվեստագետի» (Մաթևոսյան, Սպիտակ թղթի առջև 284):

Նկատենք՝ թեմայից խուսափում է անգամ արևելահայ գրողը, որը չէր ապրել այդ դժոխքը, չունէր այդ փորձառությունը, բայց հավաքական տրավմատիկ հիշողությունն այնքան ուժեղ է, որ գիտակցում է՝ մոտենալու պարագայում «այրվելու է», «ոչնչանալու»:

Մաթևոսյանի այս ուշագրավ խոստովանությունը տարիների հեռվից կարծես «արդարացնում է» վերապրող գրողների՝ Եղեռնը պատմելու անհնարինությունը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ամփոփելով հետազոտությունը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- Սփյուռքահայ գրականության մեջ Եղեռնի թեման ներկայանում է ոչ թե ամբողջական գեղարվեստական վավերագրումով, այլ լուրջան, ակնարկի, խզված պատումի ձևերով: Այսինքն՝ նրանց ստեղծագործություններում Եղեռնը ներկա է՝ բացահայտ կամ քողարկված կերպով:

- Ցեղասպանությունը վերապրած թե՛ ավագ սերնդի «մնացորդացը», թե՛ 1920-ական թվականներին գրական ասպարեզ մտած որբերի սերնդի ներկայացուցիչները,

այդ թվում՝ Վազգեն Շուշանյանը, անկարող են դառնում ամբողջականորեն վավերագրել Աղետը: Այս անկարողության պատճառը գրողական տաղանդի պակասը չէ, այլ ցեղասպանության թողած խորքային և անդարմանելի հոգետրավման:

• Ցեղասպանության հետևանքով տրավմա ստացած գրողները բախվում են անմարդկային ոճի մասին խոսելու, պատմելու, գրելու խնդրին: Նրանք տառապում են նաև զոհ լինելու ամոթի և մեղքի զգացումից: Վերապրողներին բնորոշ այս երևույթը հոգեբանական գրականության մեջ կոչվում է «Վերապրողի համախտանիշ»:

• Ֆրանսահայ գրող Վազգեն Շուշանյանը բախվում է Եղեռնը պատմելու անհնարինությանը: Իր ստեղծագործություններում նա անընդհատ փորձեր է կատարում՝ իբրև ակնատես գեղարվեստորեն վկայագրելու Եղեռնը, սակայն նրան այդպես էլ չի հաջողվում. տրավմատիկ փորձառությունը դիմադրում է գեղարվեստական ամբողջացմանը:

• Վերապրող գրողների համար Աղետը չի դառնում անցյալում ամփոփված հիշողություն, այլ շարունակում է ապրել ներկայի մեջ՝ որպես անպատմելի փորձառություն: Այսպիսով՝ վերապրողը լռում է, որովհետև անկարող է վերադառնալ ցավոտ նյութին, շոշափել արյունահոսող վերքը:

• Վ. Շուշանյանի ստեղծագործությունները կարևոր նյութ են հետեղեռնյան շրջանի հայ գրականության մեջ՝ Եղեռնի լռության պատճառները ուսումնասիրելու և վերհանելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եսայան, Չապել. *Գաղութահայ գրականությունը*. «Նորք» հանդես, Գիրք առաջին, Երևան, Պետական հրատ., 1927:
2. Չարեան, Կոստան. *Անցորդը եւ իր ճամբան: Համայնավեպ*, Երևան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, Անտարես, 2020:
3. Թեքեան, Վահան. *Հայերգություն եւ այլ քերթուածներ*, Գահիրե, 1943:
4. Թոփչյան, Ալեքսանդր. *Ապագայի ներկայությամբ*, Երևան, «Սովետական գրող», 1988:
5. Հակոբյան, Գրիգոր. *Հողվածներ և ուսումնասիրություններ, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակություն*, 2007:
6. Մաթևոսյան, Հրանտ. *Սպիտակ թղթի առջև*, Երևան, «Հայագիտակ», 2004:
7. Մնձուրի, Հակոբ. *Երկեր*. Երևան, «Սովետական գրող», 1986:
8. Մոսիկյան, Դավիթ. *Նիկողոս Սարաֆեան ի խույզ կորուսյալ միջավայրի*. Երևան, Ակտուալ արվեստ, Բանք, 2023:
9. Շուշանյան, Վազգեն. *Ալեկոծ տարիներ (1920-1932)*. «Օջական» մատենաշար, Մոնթրեալ, Գանատա, 2014:
10. ---. *Երկիր հիշատակաց*. Երևան, «Հայաստան» հրատ., 1966:
11. ---. *Մահուան առագաստը և Առաջին սերը*. Պեյրուզ, «Էտվան» հրատ., 1959:
12. ---. *Մթին պատանություն*. Պեյրուզ, 1956:
13. ---. *Օրերը գեղեցիկ չեն*. Պեյրուզ, մատենաշար «Ազգակի», թիվ 56, 1951:
14. Չոլաքեան, Ժիրայր. *Վազգեն Շուշանյանի Մահուան առագաստը*. «Նոր Յառաջ» երկօրեայ թերթ, Է. տարի, թիվ 895, 1 մարտ, Երեքշաբթի, Փարիզ, 2016:
15. Պըլտեան, Գրիգոր. *Լծորդեալ աղետներ*. «Յառաջ Միտք եւ Արուեստ», 82-րդ տարի, թիվ 21.544, Կիրակի, 1 Հոկտեմբեր, Փարիզ, 2006:
16. ---. *Մարտ*, Անթիլիաս, Լիբանան, 1997:
17. ---. *Ֆրանսահայ գրականություն 1922-1972 Նոյնեն Այլը*. Երևան, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո, Անտարես, 2017:
18. Սևան, Գեղամ. *Վազգեն Շուշանյան (կյանքն ու ստեղծագործությունը)*. Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ, 1968:

19. Սյուրմեյլյան, Լևոն-Չավեն. *Ձեզ եմ դիմում տիկիներ եւ պարոններ*. Երևան, «Սովետական գրող» հրատ., 1980:
20. Փափազեան-Չոհրապեան, Կարին. *Ստորումներ Հայոց Ցեղասպանության պատճառած հոգեխցին եւ անոր փոխանցման մասին*. «Հորիզոն» Բացառիկ, Ապրիլ, Գանատա, 2012:
21. Օտեան, Երուանդ. *Անիծեալ տարիներ 1914-1919 (անձնական յիշատակներ)*. Երևան, «Նայիրի», 2004:
22. Niederland, William G. "Clinical Observations on the "Survivor Syndrome"". *International Journal of Psychoanalysis* 49, 3 1968, 313–315 pp.

WORKS CITED

1. Esayan, Zapel. «Gaghut'ahay grakanut'yuny'». «Norq» handes Girq ar'ajin, Yerevan, Petakan hrat., 1927 ["Diasporan Armenian literature". «Norq» Journal, Book one, State publ. house] 1927. (In Armenian)
2. Zarean, Kostan. *Ancordy' ew ir twamban. Hamaynave'p [The Passerby and His Path. A Community Tale*. Yerevan, Sargis Xachenc, P'rintinfo, Antares] 2020. (In Armenian)
3. T'ek'eyan, Vahan. *Hayergut'iwn ew ayl Qert'uac'ner [Armenian Lyrics and Other Poems*. Gahire]1943. (In Armenian)
4. T'op'chyan, Aleqsandr. *Apagayi nerkayut'yamb [In the Presence of the Future*. Yerevan, Sovetakan grogh]1988. (In Armenian)
5. Hakobyan, Grigor. *Hodvac'ner ev usumnasirut'yunner [Articles and studies*. S. Etchmiadzin, Publishing House of the Mother See of Holy Etchmiadzin] 2007. (In Armenian)
6. Mat'evosyan, Hrant.*Spitak t'ght'i ar'jev [In Front of the White Paper*. Yerevan, "Hayagitak"] 2024. (In Armenian)
7. Mnd'uri, Hakob. *Erker [Works*. Yerevan, "Sovetakan grogh" edition] 1986. (In Armenian)
8. Mosinyan, Davi t'. *Nikoghos Sarafean i xuyz korusyal mijavayri [Nikoghos Sarafian in the Search of a Lost Environment*. Yerevan, Aktual arvest, Banq] 2023. (In Armenian)
9. Shushanean, Vazgen. *Alekots tariner [Turbulent years (1920-1932)*. "Oshakan" matenashar, Mont'real, Ganata] 2014. (In Armenian)
10. ---. *Erkir hishatakac [The Land of Memories*.Yerevan, "Hayastan" edition]1966. (In Armenian)
11. ---.*Mahuan ar'agasty' ev Ar'ajin s e'r y' [The Sail of Death and First Love*., Pe'yрут', "E'tvan" edition] 1959. (In Armenian)
12. ---.*Mt'in patanut'iwn [Dark adolescence*.,Pe'yрут'] 1956. (In Armenian)
13. ---.*O'rary' geghechik chen [The days are not beautiful*., matenashar "Azdak"i, t'iv 56, Pe'yрут'] 1951. (In Armenian)
14. Cholaqean,Jhirayr. «*Vazgen Shushaneani "Mahuan ar'agasty"*». "Nor Yaraj" erko'reay t'ert', E' tari, t'iv 895, Ereqshab't'i, 1 Mart, P'ariz e'j 3, 2016 ["*Vazgen Shushanyan's The Sail of Death*". "Nor Haratch" newspaper, 7nd year, № 895,Tuesday,1 March, Paris, p.3] 2016. (In Armenian)
15. P'y'ltean, Grigor. «*Lc'ordeal aghe'tner*». "Yaraj Mitq ew Aruest", 82-rd tari, tiv 21.544, Kiraki, 1 Hoktember, P'ariz, e'j 1,4, 2006. ["*Associated disasters*". "*Haratch Thought and Arts*, 82nd year, № 24.544, Sunday,1 October, Paris, pp. 1,4] 2006. (In Armenian)
16. ---. *Mart. [Struggle*. An t'ilias, Libanan] 1997. (In Armenian)

17. ---. *Fransahay grakanut'iwn 1922-1972 Noyn e'n Ayly'* [Armenian-French Literature 1922-1972: The Same and the Other. Yerevan, Sargis Xachenc, P'rintinfo, Antares] 2017. (In Armenian)
18. Sevan, Gegham. *Vazgen Shushanyan (kyanqn u steghagorc'ut'yuny')* [Vazgen Shushanyan (His Life and Work. Yerevan, Haykakan SSH GA edition]1968. (In Armenian)
19. Syurmelyan, Levon-Zaven. *D'ez em dimum tikinner ev Paronner* [I ask You Ladies and Gentlemen. Yerevan, "Sovetakan grogh" edition]1980. (In Armenian)
20. P'ap'azean-Zohrapean, Karin. "Horizon" Bacarik, April, Ganata, e'j 25-26] 2012. [*Mtorumner Hayoc Ceghaspanut'ean pattwarac' hogexocin ew anor p'oxancman masin. [Reflections on the Psychological Trauma Caused by the Armenian Genocide and Its Transmission*". "Horizon" Exclusive, April, Canada, pp. 25-26] 2012. (In Armenian)
21. Otean, Eruand. *Anic'eal tariner 1914-1919 (and'nakan yishatakner)* [Cursed Years: 1914-1919 (personal memories). Yerevan, "Nayiri" edition] 2004. (In Armenian)

THE IMPOSSIBILITY OF NARRATING THE GENOCIDE IN THE WORKS OF VAZGEN SHUSHANYAN

NELLI TADEVOSYAN

*Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan, «Spyurk»
("Diaspora") Scientific and Educational Center, Research fellow,
Yerevan, the Republic of Armenia*

The article addresses the theme of the Genocide as the foundational substratum of the Armenian Diaspora, focusing in particular on its reception in Diasporan Armenian literature.

The aim of the article is to examine the creative and moral-psychological challenges faced by survivor writers, especially the French-Armenian writer Vazgen Shushanyan (1902–1941), a representative of the orphan generation. It is well known that many Diasporan Armenian writers who survived the Armenian Genocide were ultimately unable to fully articulate the Catastrophe in literary form; even decades after the Genocide, many of them failed to break the silence.

The purpose of the study is to examine the forms of artistic representation of the Genocide within Vazgen Shushanyan's creative system, focusing in particular on the challenges the writer faces in conveying the Catastrophe through literature and on the ways in which the psychotraumatic impact of the Genocide manifests itself in Shushanyan's texts. The study further examines whether the prose writer is ultimately able to overcome the trauma of the Genocide or remains within an aesthetic domain of silence, implication, and fragmented narration.

The study was conducted using biographical, comparative, analytical, and synthetic methods.

The significance of the study lies in the fact that the problem of the artistic representation of the Genocide has received little attention in the existing literary scholarship on V. Shushanyan. The article thoroughly examines the deep-rooted reasons behind Shushanyan's inability to speak about the Genocide, demonstrating that silence and fragmented narration stem from the indelible psychotraumata left by the genocide. In Shushanyan's works, silence appears not as a distinctive mode of survival and psychological self-preservation, but as a conscious escape from the painful experience of the Genocide — a distinctive mode of survival.

Keywords: *Genocide, Diasporan Armenian literature, orphan generation, Vazgen Shushanyan, survivor writer, psychotrauma, survivor syndrome, “great silence”.*

НЕВОЗМОЖНОСТЬ ПОВЕСТВОВАНИЯ О ГЕНОЦИДЕ В ТВОРЧЕСТВЕ ВАЗГЕНА ШУШАНЯНА

НЕЛЛИ ТАТЕВОСЯН

*научный сотрудник научно-образовательного центра «Спюрк» («Дiasпора»)
Армянского государственного педагогического университета им. Хачатуря
Абовяна,
г. Ереван, Республика Армения*

В статье рассматривается тема Геноцида как фундаментальная основа формирования диаспоры, в частности то, какой отклик она получила в литературе армянской диаспоры.

Цель статьи — показать, с какими творческими, нравственно-психологическими проблемами сталкиваются писатели, пережившие катастрофу, особенно представители поколения сирот, к которым относится франко-армянский писатель Вазген Шушанян (1902–1941). Известно, что большинству писателей армянской диаспоры, переживших Геноцид, и не удалось художественно отобразить трагедию: даже спустя десятилетия после Геноцида многие из них не смогли преодолеть этот барьер молчания.

Задачей исследования является выявление форм художественного воплощения темы Геноцида и анализ его психотравматического воздействия на творчество Вазгена Шушаняна, уделяя особое внимание трудностям, возникающим у писателя при передаче Катастрофы средствами литературы, а также тому, каким образом психотравматическое воздействие Геноцида проявляется в текстах Шушаняна. В исследовании также рассматривается, способен ли прозаик в конечном итоге преодолеть травму Геноцида или же остается в эстетическом пространстве молчания, намек и фрагментарного повествования.

Исследование выполнено с применением биографического, сравнительного, аналитического и сопоставительного методов.

Научная значимость и новизна работы заключается в том, что проблема художественного осмысления Геноцида получила недостаточное внимание в существующем литературоведении, посвященном В. Шушаняну. В статье подробно рассматриваются глубинные причины неспособности Шушаняна говорить о Геноциде и декларируется, что молчание и фрагментарность повествования обусловлены неизгладимыми, фактически неизлечимыми психотравмами, оставленными геноцидом. В произведениях Шушаняна молчание предстает не только как особая форма выживания и психологического самосохранения, но и как сознательное бегство от болезненного опыта Геноцида — своеобразный способ выживания.

Ключевые слова: *Геноцид, литература армянской диаспоры, поколение сирот, Вазген Шушанян, выживший писатель, психотравма, синдром выжившего, «великое молчание».*